

կեան է. ան մեծ աւագան մըն է որ կը գտնուի Են-  
նոմի Զորին վերի ծայրը Իսլամ գերեզմանատան մը  
մէջտեղը: Աւագանը ունի 90 մէզը երկայնութիւն և  
60 մէզը լայնութիւն, ու 6 մէզը խորութիւն, որուն  
մեծ մասը ժայռի մը փորուածքն է, բայց ներսի  
կողմը քարով հիւսուած է:

614ի Երուսաղէմը Պարսից կողմէն զրաւման ժաւ-  
մանակակից յիշատակարան մը կը պատմէ թէ «24,518  
քրիստոնեաներ Մամիլլա կոչուած աւագանին մէջ  
լեցուեցան: Մամիլլա քաղաքէն մէկ նետընկէց հե-  
ռու է. անոնք հաւատքի մարտիրոսներ էին՝ որոնք  
հոն Աստուծոյ զոհուեցան» (Cou. էջ 34-9):

Բեռնարդոս՝ որ 870ին այցելեց նոյն աւագանը,  
կը գրէ. «Սրբուհի Մամիլլայի եկեղեցին՝ ուր թաղ-  
ուեցան Սարակինոսներէ սպաննուած շատ մը մարտի-  
րոսներու մարմինները»: Այս եկեղեցին սուրբ կնոջմէ  
մը չէ որ իր անունը առած է, այլ այն սուրբ տեղէն  
ուր կը բարձրանար ան: Այժմ եկեղեցիի հետք մնա-  
ցած չէ, բայց այրը՝ որ անոր գետնադամբան կը ծա-  
ռայէր, չէր այն ոսկրանոցը՝ ուր գետեղուեցան բազ-  
մաթիւ զոհերու մարմինները, տակաւին կը տեսնուի  
աւագանին արեւելքը:

ԺԲ. գարուն այս այրին անունն էր Առիւծին գե-  
րեզմանատեղին (charnier de Lion), վասն զի այս թուա-  
կանի զրոյցի մը համաձայն, առիւծ մը այս քարայ-  
րին մէջ կը հաւաքէր նահատակաց մարմինները (\*):

էս-սին (ժե. դար) կը վստահացնէ թէ Երուսաղէմի հրեաներ կը կո-  
չէին զայն **Պէյդ-Միլլոս**: Բաբելոնի Թալմուսը կը յիշուակէ զայն  
**Պէյդ Մամիլ** կամ **Մամիլա** անուամբ: Մամիլլա անունը մա  
**Միլլոն** է, որ կը նշանակէ Միլլոյի ջուրեր (Bar. G. էջ 200):

(\*) Այս գրոյցը կամ աւանդութիւնը առային անգամ յիշատա-